

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն
Դպրոցում Առողջության Գնահատման Ուղեցույց

Դպրոցում Առողջության գնահատումն ավելի կարևոր է, քան երբևէ՝ օգնելու համար հայտնաբերել առողջական խնդիրները ավելի վաղ փուլում և բարելավել Կալիֆորնիայի դպրոցում սովորող աշակերտների առողջությունը: Չնայած ներկայումս դպրոցների փակմանը և COVID-19-ի շարունակական ազդեցությանը՝ դպրոցում առողջության գնահատումը, որը պահանջվում է դպրոց մտնելիս, շարունակում է ուժի մեջ մնալ 2020-21 ուսումնական տարվա ընթացքում: Այս փաստաթուղթն առաջարկում է ուղեցույց, թե ինչպես տեղում գնահատում կատարել այնպիսի տարբերակով, որը կօգնի անձնակազմին և երեխաներին առողջ պահել և կանխել վիրուսի տարածումը: 2020-21 ուսումնական տարվա ընթացքում դպրոցում առողջության անհրաժեշտ գնահատման, համապարփակ սեռական առողջությանը վերաբերող կրթության և դեպքերի վերաբերյալ անհապաղ զեկուցելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Կալիֆորնիայի Կրթության Վարչության [Վեբ Կայք](#) այցելելով Դպրոցում Առողջության և Անվտանգության Ուղեցույցը:

Ընդհանուր Տեղեկություններ COVID-19-ի Մասին

COVID-19-ի Ախտանշանները

COVID-19-ով վարակված անձինք ունեցել են բազմաբնույթ ախտանշաններ, որոնք տատանվում են մեղմից մինչև ծանր: Ախտանշանները կարող են ներառել՝

- Ջերմություն
- Հազ
- Ծնչարգելություն/ Դժվարացած Ծնչառություն
- Հոգնածություն
- Դող
- Քթի խցանում կամ քթարտադրություն
- Մկանային կամ մարմնի ցավ
- Գլխացավ
- Կոկորդի ցավ
- Սրտխառնոց կամ փսխում
- Փորլուծություն
- Համի կամ հոտի նոր կորուստ

Ինչպես է տարածվում COVID-19-ը

Հիմնականում վիրուսը մեկ անձից մյուսին է տարածվում սերտ շփման միջոցով: <<Սերտ շփումը>> հետևյալ անձանցից յուրաքանչյուրն է, որոնք շփվել են <<վարակված անձի հետ>>, երբ այդ անձը վարակակիր էր՝

- Անձը, ով վարակված անձի մոտ գտնվել է 6 ոտնաչափ հեռավորության սահմաններում ավելի քան 15 րոպե:
- Անձը, ով առանց պաշտպանվելու շփում է ունեցել վարակված անձի մարմնի հեղուկների և/կամ արտազատումների հետ, օրինակ՝ այդ անձը հագացել կամ փռշտացել է, համատեղ օգտագործել են սպասքը կամ առնչվել են թքին, կամ օրինակ վարակված անձին խնամելը առանց համապատասխան պաշտպանիչ պարագաների:

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Դպրոցում Առողջության Գնահատման Ուղեցույց

* Այս ուղեցույցի համաձայն՝ վարակված անձ է համարվում ցանկացած անձ, ում մոտ հաստատվել է COVID-19, կամ ով, ախտանշանների վրա հիմնվելով, կասկածվում է, որ կարող է COVID-19-ով վարակված լինել: Այս մարդիկ համարվում են վարակակիր՝ իրենց ախտանշանների ի հայտ գալուց 2 օր առաջ, մինչև նրանցից այլևս չպահանջվի մեկուսանալ (Ինչպես նկարագրված է [COVID-19 ունեցող մարդկան Տնային մեկուսացման ուղեցույցի](#) մեջ): COVID-19-ի թեստի դրական պատասխան ունեցող, բայց ախտանշաններ չունեցող անձը (ասիմպտոմատիկ) համարվում է վարակակիր իրենց թեստը հանձնելու 2 օր առաջ և 10 օր հետո:

Դպրոցում Առողջության Գնահատում

Բերանի խոռոչի Առողջության Գնահատում

Բերանի խոռոչի առողջության գնահատմանը վերաբերող տեղեկությունները պետք է շարունակվեն տրամադրվել ծնողներին և օրինական խնամակալներին՝ Կալիֆորնիայի Կրթական Օրենսգրքի (EC) 49452.8 Բաժնի համաձայն: Այս բաժինը պահանջում է, որպեսզի պետական դպրոցներում սովորող աշակերտները, որոնք գրանցված են մանկապարտեզում (կամ առաջին դասարանի աշակերտները, եթե նախկինում գրանցված չեն եղել մանկապարտեզում) ստանան բերանի խոռոչի առողջության գնահատում ոչ ուշ, քան մայիսի 31-ին, եթե ծնողը / խնամակալը չի նշում պատճառ, թե ինչու չի կարող իրականացվել գնահատում:

Ցանկացած բժիշկ, ով իրականացնում է բերանի խոռոչի առողջության գնահատում, պետք է համապատասխանի այն հանձնարարականներին, որոնք տրամադրվում են ատամնաբույժներին Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության կողմից՝ <http://ph.lacounty.gov/acd/ncorona2019/dentists.htm>.

Տեսողության Ստուգում

EC-ի 49452 և 49455 բաժինների համաձայն՝ դպրոցները պետք է շարունակեն աշակերտների տեսողության ստուգումը և ուղորդեն աշակերտներին՝ ըստ անհրաժեշտության: [Կալիֆորնիայի Պետական Դպրոցներում Տեսողության Ստուգման Ուղեցույցի \(PDF\)](#) հրատարակումը տարածաշրջանային և դպրոցի բուժանձնակազմին տրամադրում է դպրոցի տեսողության ստուգման ծրագրի համար ուղեցույց՝ ինչպես նշված է EC -ի 49455 բաժնում:

Լսողության Ստուգում

Դպրոցները պետք է շարունակեն իրականացնել լսողության ստուգում և ուղորդել աշակերտներին՝ ըստ անհրաժեշտության՝ ինչպես պահանջվում է EC-ի 49452 Բաժնի համաձայն: Կալիֆորնիայի Առողջապահության Վարչության (DHCS) Կողմից [Դպրոցում Լսողությունը Ստուգող Բժշկի Ձեռնարկը \(PDF\)](#), տրամադրում է տեղեկություններ Դպրոցում Լսողության Պահպանման

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն
Դպրոցում Առողջության Գնահատման Ուղեցույց

ծրագրի վերաբերյալ՝ համաձայն 49452 Բաժնի: Այս ձեռնարկը նախատեսված է այն անձանց համար, ովքեր նախկինում անցել են վերապատրաստում աուդոմետրիայի բնագավառում և չի հանդիսանում փոխարինող ուսումնական ձեռնարկ:

Եթե առողջության գնահատումն իրականացվում է դպրոցի տարածքում, ապա պետք է պահպանվեն հետևյալ կանոնները՝

1. Պահպանեք սոցիալական հեռավորություն եւ իրականացրեք տեղում վարակի վերահսկիչ միջոցառումներ

- Յուրաքանչյուր անձ պետք է կրի դիմակ այլ մարդկանց մոտ գտնվելու ամբողջ ընթացքում: 2 տարեկանից ցածր երեխաները եւ այնպիսի առողջական խնդիրներ ունեցող անձինք, որոնց դեպքում դիմակի կրումն անվտանգ չէ, բացառություն են կազմում այս պահանջից. որտեղ հնարավոր է, կրեք դեմքի վահան՝ ներսի կողմից ամրացված կտորով, որը ծածկում է կզակը, սա պետք է օգտագործվի այն անձնաց կողմից, որոնք չեն կարող դիմակ կրել
- Սահմանափակեք տեղում անձնակազմի և աշակերտների քանակը, որպեսզի պահպանվի առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն միևնույն ընտանիքի անդամ չհանդիսացող անձանց միջև:
 - Առաջարկեք նախնական պայմանավորվածությունների համար այնպիսի ժամանակ, որոնք իրարից այնքան հեռու լինեն, որպեսզի գնահատումների միջակայքում իրականացվեն պատշաճ մաքրման աշխատանքներ: Պայմանավորվածությունների վերաբերյալ հիշեցումները պետք է ներառեն տեղում ֆիզիկական հեռավորության պահպանման և վարակի վերահսկման մասին տեղեկություններ:
 - Տրամադրեք ֆիզիկական ուղեցույցներ՝ ինչպիսիք են ժապավենը հատակի կամ մայրերի վրա և ցուցանակներ՝ պատերին՝ ապահովելու անձնակազմի անդամների և աշակերտների կողմից հերթում կամ ուրիշ ժամանակ առնվազն 6 ոտնաչափ հեռավորության պահպանումը (օրինակ՝ ուղեցույցներ միջանցքներում «միակողմանի երթուղիներ» ստեղծելու համար):
 - Ստեղծեք մուտքի և ելքի երթուղիներ՝ օգտագործելով հնարավորինս շատ մուտքեր: Տեղում ստեղծեք արձանագրություններ՝ այլ անձանց հետ անմիջական շփումը սահմանափակելու համար:

2. Ստուգեք Անձնակազմին, Աշակերտներին եւ Այցելուներին

COVID-19-ի համար ստուգումը օգնում է կանխել վիրուսի ներթափանցումը բարձր ռիսկային տարածքներում: Ստուգումը պարզ է: Այն իրենից ենթադրում է 1) հարցնել՝ արդյոք անձի մոտ առկա է հազ, դժվարացած շնչառություն կամ այլ շնչառական ախտանիշներ, և 2) ստուգել ջերմությունը՝ օգտագործելով հեռավար ջերմաչափ (առանց դիպչելու), իսկ եթե դա հնարավոր չէ, ապա պետք է բանավոր կերպով ստուգել՝ արդյոք տվյալ անձը ջերմություն ունի թե ոչ:

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն
Դպրոցում Առողջության Գնահատման Ուղեցույց

- Անձնակազմը, երեխաները, ծնողները/խնամակալները և այցելուները պետք է կանոնավոր կերպով հիշեցվեն, որ պետք է անձամբ իրենց տանը կատարեն ախտանշանների ստուգում և մնան տանը, եթե հիվանդ են, անգամ եթե մեղմ ախտանիշներ ունեն:
 - Կարգադրեք ծնողներին ստուգել իրենց և իրենց երեխաներին տնից դուրս գալուց առաջ: COVID-19-ին բնորոշ ախտանիշներ ունեցող ցանկացած անձ՝ ներառյալ երեխա՝ առանց այլ տեսակի ախտանիշի, պետք է մնա տանը՝ մեկուսացման մեջ, առնվազն 10 օր՝ գումարած առնվազն 24 ժամ ջերմությունը (առանց ջերմիջեցնող դեղորայքի օգտագործման) իջնելուց և ախտանիշների բարելավվելուց հետո:
 - Եթե երեխան կամ ծնողը վերջերս սերտ շփում են ունեցել այն անձի հետ, ում COVID-19-ի թեստի պատասխանը դրական է եղել կամ ուներ ախտանիշներ, ապա պետք է մնան կարանտինում այդ անձի հետ շփման օրվանից հետո 14 օր:
 - Կարգադրեք ծնողներին զանգահարել դպրոց՝ առողջության գնահատման օրը տեղափոխելու դեպի այն օր, երբ իրենց մեկուսացման կամ կարանտինը ժամկետը կավարտվի:
- Առողջության ստուգումը ամբողջ անձնակազմի և երեխաների համար պետք է կատարվի ժամանման պահին:
 - Ապահովեք, որպեսզի առողջական ստուգումների իրականացման ծրագրերը բավարարեն երեխաների կարիքները, որոնք հանդիպելու են ֆիզիկական հպումների և/կամ մեծ փոփոխությունների իրենց առօրյա կյանքում:
- Եթե անձնակազմի անդամի կամ երեխայի մոտ ի հայտ են գալիս COVID-19-ի ախտանշաններ, ապա նրանք չպետք է մնան հաստատության տարածքում:

3. Պահպանեք պատշաճ հիգիենա COVID-19-ի տարածումը կանխելու համար

- Ողջ անձնակազմը պետք է կրի [կտորե դիմակներ](#) աշխատավայրում գտնվելու ամբողջ ընթացքում՝ բացառությամբ ուտելու կամ առանձին սենյակում գտնվելու, կամ անձնակազմի անդամի հասակը գերազանցող առանձնացված խցում գտնվելու դեպքերի:
- Աշխատակիցները, որոնց իրենց բժիշկը կարգադրել է չկրել դիմակ, պետք է կրեն դեմքի վահան՝ ներքևից ամրացված կտորով, որպեսզի պահպանվեն Նահանգային կարգադրությունները, քանի դեռ իրենց կարգավիճակը թույլ է տալիս: Ցանկալի է, որպեսզի ներսի կտորը ծածկի կզակը:
- Հաստատությունը պետք է տրամադրի դիմակներ ամբողջ անձնակազմին, ովքեր որևէ շփում ունեն մյուս աշխատակիցների, երեխաների և/կամ այցելուների հետ հաստատության ներսում:
- Կարգադրեք անձնակազմին ամեն օր լվանալ կամ փոխել դիմակները:
- Օգտագործեք նշաններ, որպեսզի անձնակազմին, այցելուներին կամ երեխաներին հիշեցնեք ձեռքերը հաճախ լվանալու մասին: Նշանները տեղադրեք բոլոր լոգասենյակներում՝ ձեռքերը լվանալու ճիշտ տեխնիկան սովորեցնելու համար:

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Դպրոցում Առողջության Գնահատման Ուղեցույց

- Օգտագործեք տարիքին համարժեք նշաններ երեխաներին հիշեցնելու համար, որ ձեռքերը հաճախ լվանան (տե՛ս օրինակն այստեղ՝ <https://www.cdc.gov/handwashing/buttons.html>).
- Նշանները պետք է մեծահասակներին ցուցադրեն ձեռքերի ճիշտ լվացման եղանակները (տե՛ս օրինակն այստեղ՝ <http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/docs/protection/GuidanceHandwashing-English.pdf>):
- Տրամադրեք պատշաճ հիգիենա պահպանելու համար անհրաժեշտ պարագաներ՝ ներառյալ ձեռքերի լվացման համար հեշտ հասանելի և ֆունկցիոնալ լվացարաններ, օձառ, թղթե անձոռցիկ և սպիրտ պարունակող ձեռքի ախտահանիչ միջոց: Պարզեցրեք մեծահասակների համար որևէ տարածք կամ սենյակ մտնելու դեպքում մուտքի մոտ ձեռքերի ախտահանումը:
 - Հաշվի առեք, որ CDC զգուշացնում է երեխաների կողմից առանց մեծահասակների հսկողության ախտահանիչ միջոցների օգտագործման վտանգի մասին, քանի որ հնարավոր է երեխաները կուլ տան սպիրտը (տե՛ս <https://www.cdc.gov/handwashing/show-me-the-science-hand-sanitizer.html>).

4. Մաքրումը և Ախտահանումը ձեր հաստատությունում

- Մաքրումը և ախտահանումը 2 տարբեր քայլեր են մաքրման գործընթացում:
 - Մաքրումը նպատակ ունի մակերեսներից հեռացնել մանրէները (ներառյալ վիրուսները), կեղտը և արտաքին աղտոտված շերտը: Մաքրումը չի սպանում մանրէները, սակայն նվազեցնում է վարակի վտանգը՝ նվազեցնելով մակերեսի վրա առկա մանրէների քանակը:
 - Ախտահանումը՝ մյուս կողմից, արտաքին շերտը տեսանելիորեն մաքուր չի դարձնում, սակայն նվազեցնում է վարակի ռիսկը՝ սպանելով արտաքին մակերեսի վրա առկա մանրէները: Ինչքան ավելի ուժեղ և կայուն է ախտահանիչը արտաքին մակերեսի վրա, այնքան շատ մանրէներ է այն սպանում:
- Մաքրման համար
 - Մաքրման համար արդյունավետ են տաք ջուրը և օձառը: Նրանք վերացնում են մանրէները, կեղտը և արտաքին աղտոտված շերտը:
 - Եթե չունեք օձառ, օգտագործեք այլ լվացող-մաքրող միջոց:
- Ախտահանման համար
 - Օգտագործեք EPA-ի կողմից հաստատված ախտահանիչ, եթե կա այդպիսին: Այլընտրանք կարող է հանդիսանալ ախտահանիչ լուծույթը՝ 5 թեյի գդալ (1/3 բաժակ) լուծույթը խառնել մեկ գալլոն ջրին, կամ 4 թեյի գդալ լուծույթը մեկ քվարտ ջրին:
 - Երեխաների և անձնակազմի մոտ ասթմայի ռիսկը նվազեցնելու համար, փորձեք օգտագործել [EPA-ի ցուցակում](#) առկա ախտահանիչ միջոցներ՝ ասթմայի համար

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն
Դպրոցում Առողջության Գնահատման Ուղեցույց

անվնաս բաղադրիչներով (հիդրոգեն պերեկիս, լիմոնի թթու կամ կաթնաթթու) և ի տարբերություն արտադրանքների, որոնք պարունակում են պերօքսիտիկ թթու օգտագործեք նատրիումի հիպոքլորիտ (սպիտակեցում) կամ քառորդ ամոնիումի միացություններ պարունակող արտադրանքներ:

- Ախտահանիչ միջոցները և տնային պայմաններում ստեղծված ախտահանիչ լուծույթները պետք է մնան մակերեսի վրա ախտահանելու համար ըստ պիտակի ցուցումների:
- Ապահով մաքրում և ախտահանում
 - Ցանկալի կլինի, որպեսզի ամբողջական մասշտաբով մաքրում և ախտահանում կատարվի երեխաների՝ տարածքից մի քանի ժամ բացակայելու դեպքում, որպեսզի հնարավորություն տրվի տարածքը մինչև երեխաների ընդմիջումից վերադառնելը պատշաճ կերպով մաքրել:
 - Հաճախ դիպչող մակերեսների կամ ադտոտված տարածքների մաքրումը և ախտահանումը պետք է իրականացվի պարբերաբար՝ օրվա ընթացքում, նույնիսկ այն դեպքում, երբ երեխաները ներկա են: Խնդրային մակերեսները կարող են ներառել լվացարանների բռնակներ, գուգարանի բռնակներ, սեղաններ և դռների բռնակներ, ինչպես նաև գնահատում իրականացնելիս օգտագործված գործիքներ՝ ինչպիսիք են աուդիոմետր սարքերը, ականջակալները, աչքերի ծածկման գործիքները (գնահատման այդ գործիքները պետք է մաքրվեն ըստ արտադրության ցուցումների):
 - Ստուգեք արտադրանքների պիտակները: Երբեք մի՛ խառնեք ախտահանիչ լուծույթ և ամոնիակ պարունակող նյութերը, քանի որ արտադրվող գազը չափազանց վտանգավոր է:
 - Մաքրող և Ախտահանիչ միջոցները պետք է պահպանվեն երեխաների համար ոչ հասանելի վայրերում:
 - Եթե հնարավոր է, մաքրումը և ախտահանումը պետք է կատարվի պատուհանները և/կամ դռները բաց վիճակում՝ թույլ տալով քիմիական նյութերին լուծվել, կամ այն ժամանակ, երբ երեխաները դրսում են կամ բացակայում են տարածքից:
 - Վստահ եղեք, որ մաքրող միջոցներ օգտագործող ցանկացած անձ ըստ պատշաճի պաշտպանված է PPE-ով՝ ներառյալ ձեռնոցներ և/կամ աչքերի համար պաշտպանիչ միջոցներ՝ ըստ արտադրանքի ցուցումների:

5. Քայլեր, որոնք պետք է ձեռնարկվեն, երբ անձնակազմի անդամի մոտ ախտորոշվել է COVID-19

- Անձնակազմի անդամը պետք է մնա տանը, եթե հիվանդ է և ունի շնչառական հիվանդության ախտանիշներ, օրինակ՝ ջերմություն կամ հագ:
 - Հիշեցրեք անձնակազմի անդամին, որ նա պետք է մնա տանը՝ մեկուսացման մեջ և չվերադառնա հաստատություն ախտանիշների ի հայտ գալուց հետո առնվազն 10 օր ԵՎ

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Դպրոցում Առողջության Գնահատման Ուղեցույց

այն բանից հետո, երբ նրա ախտանիշները բարելավվել են ԵՎ նա առնվազն 24 ժամ ջերմություն չունի՝ առանց ջերմիջեցնող դեղորայքի օգտագործման:

- Եթե անձնակազմի անդամի մոտ կան ախտանիշներ, սակայն նա չի թեստավորվել COVID-19-ի համար, ապա կարգադրեք նրան թեստավորվել իր բժշկի մոտ՝ հանրային անվճար թեստի անցկացման տեղում, կամ իրենց ընտրությամբ այլ տեղում և արդյունքների մասին տեղեկացնել կենտրոնին:

- Ամբողջ անձնակազմը և ցանկացած երեխա, ով սերտ շփում է ունեցել վարակված անձի հետ, պետք է տուն ուղարկվի՝ տանը կարանտինի մեջ մնալու համար: Կարանտինը պետք է տևի վարակված անձի հետ շփումից հետո 14 օր: Եթե 14 օրվա ընթացքում ախտանիշներ չի հայտ չեն գալիս, ապա կարանտինում գտնվող անձը կարող է վերադառնալ աշխատանքի: Կարանտինի մեջ գտնվելու ընթացքում թեստի բացասական պատասխան լինելու դեպքում, կարանտինի ժամանակահատվածը չպետք է կրճատվի: Կարանտինի ժամանակահատվածը վերջին շփումից հետո միշտ 14 օր է կազմում:

- Եթե վարակված անձը, ախտանիշների չի հայտ գալու պահին և/կամ ախտանիշներ ունենալուց 2 օր առաջ գտնվել է աշխատավայրում, ապա հետևեք ստորև ներկայացված ուղղություններին՝ Հանրային Առողջապահության Վարչության հետ կապ հաստատելու համար, որպեսզի համապատասխան գործողությունների իրականացնեք:

- Տանը մնալու կամ ապաքինվելուց հետո աշխատանքի վերադառնալու համար բժշկի կողմից ծանուցում հարկավոր չէ այն աշխատակիցների (կամ երեխաների) համար, որոնք հիվանդ են եղել սուր շնչառական հիվանդությամբ:

6. Քայլեր, որոնք պետք է ձեռնարկվեն, երբ կենտրոնում տեղի է ունեցել վարակման դեպք

- Երբ ձեր հաստատությունում որևէ անձ (երեխա, անձնակազմի անդամ կամ այցելու) ունենա COVID-19 (հաստատվել է լաբորատորիայի թեստի միջոցով կամ կասկածվում է ախտանիշներից ելնելով), կապ հաստատեք Հանրային Առողջապահության Վարչության Սուր Վարակիչ Հիվանդությունների Ծրագրի հետ, որպեսզի ստանաք հրահանգներ այն մասին, թե ինչ քայլեր կարող եք ձեռնարկել՝ մյուս երեխաների և անձնակազմի համար ռիսկը նվազեցնելու համար: Ծրագրին կարող եք դիմել հետևյալ հեռախոսահամարով՝ (213)-240-7941 աշխատանքային ժամերին կամ հետևյալ հեռախոսահամարով՝ (213) 974-1234 ոչ աշխատանքային ժամերին:

- Որոշեք այն մարդկանց, որոնք կարող են սերտ շփում ունեցած լինել հիվանդ անձի/անձանց հետ ավելի քան 15 րոպե շարունակ, կամ նրանց, ովքեր կարող են առանց պաշտպանիչ պարագաներ կրելու անմիջական շփում ունեցած լինել հիվանդ անձի մարմնի հեղուկների կամ արտազատումների հետ՝ ախտանշանների չի հայտ գալուց 2 օր առաջ: Մարմնի հեղուկները կամ արտազատումները ներառում են՝ թուրք, խորխային արտադրություն, քթի

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն
Դպրոցում Առողջության Գնահատման Ուղեցույց

լորձ, փոխում, մեզ կամ փորլուծություն: Այս մարդիկ պետք է տանը կարանտին պահպանեն շփման օրվանից հետո 14 օր:

- Ցանկացած անձ, ով սերտ շփում է ունեցել վարակված անձի հետ, պետք է ուղարկվի տուն՝ տանը կարանտին պահելու:
- Եթե կարանտինում գտնվելու ընթացքում անձնակազմի անդամների կամ երեխաների մոտ ի հայտ են գալիս ախտանշաններ, ապա նրանք պետք է հետևեն ինքնամեկուսացման հրահանգներին (ախտանշանները սկսելուց հետո 10 օր ԵՎ շերտությունը իջնելուց և ախտանշանները բարելավվելուց հետո 24 ժամ):

Ձեզ հետաքրքրող լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վեբ Կայքում՝ <http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/>.

Օգտակար Աղբյուրներ

- Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն (LACDPH, Շրջանային)
<http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/>
Սոցիալական Ցանց՝ @lapublichealth
- Լոս Անջելեսի Շրջանի Հոգեկան Առողջության Կենտրոնի Վարչություն 24/7
Աջակցության Գիծ՝ (800) 854-7771
- Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչություն, Համայնքային Ծառայությունների Լիցենզավորման Բաժին
<https://www.cdss.ca.gov/inforesources/community-care-licensing>
- Կալիֆորնիայի Հանրային Առողջապահության Վարչություն (CDPH, Նահանգային)
<https://www.cdph.ca.gov/Programs/CID/DCDC/Pages/Immunization/nCOV2019.aspx>
- Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոններ (CDC, Ազգային)
<http://www.cdc.gov/coronavirus/novel-coronavirus-2019.html>
- Առողջապահության Համաշխարհային Կազմակերպություն (WHO, Միջազգային)
<https://www.who.int/health-topics/coronavirus>

Եթե ունեք հարցեր և ցանկանում եք զրուցել որևէ մեկի հետ, կամ բուժօգնություն գտնելու համար ձեզ օգնություն է անհրաժեշտ, ապա զանգահարեք Լոս Անջելեսի Շրջանի Տեղեկատվական Գիծ՝ 2-1-1 հեռախոսահամարով, որը հասանելի է 24/7: